Արձանագրություն N 3

N «ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 դեկտեմբերի 2017թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝

Հայտեր բացող անդամներ՝ Հռիփսիմե Պողոսյան /գլխավոր հաշվապահ/

Շուշանիկ Կարակոզյան /գլխավոր քույր/

Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները:

«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

2.1 <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ, էլ.փոստ՝ euro-wedding@mail.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող հանձնաժողովը <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագիրը գնահատել է անբավարար, քանի որ ֆուրշետային ծառայությունների մատուցումը և պատրաստի սննդի մատուցման ծառայությունները ըստ գնահատող հանձնաժողովի տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել: Հիմք ընդունելով **«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»** ծածկագրով հրավերի I մասի 8-րդ կետի 8.20 ենթակետի 2) պարբերությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվում է մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները

3.1 <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համապատասխանում է իրականությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 **«ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1»** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մերժել և այն համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

4.2 Հիմք ընդունելով <<**ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1**>> ծածկագրով հրավերի I մասի 8-րդ կետի 8.20 ենթակետի 2) պարբերությունը <<Հայարփի Քալանթարյան>> ԱՁ-ի տալ մեկ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար:

Արձանագրված թերությունները չշտկելու դեպքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից կճանաչվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցը

4.3 <<**ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1**>> ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը կկայանա 28.12.2017թ. ժամը 11:00-ին:

6 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<**ԱՀԱԿ-ԲՄԾՁԲ-18/1**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Գրիգորյան

Անդամներ՝ _____ Լիանա Խաչատրյան

_____ Աննա Հովհաննիսյան

_____ Հռիփսիմե Պողոսյան

_____ Շուշանիկ Կարակոզյան

Քարտուղար՝ _____ Հայկանուշ Թովմասյան